600.0179.19.06.15

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19 հունիսի 2015 թվականի №179Ա
քաղ. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2006 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 15-Ի №202Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի «դ» ենթակետը, 2-րդ կետի «ժ» և «ժդ» ենթակետերը և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 1-ին մասը՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի՝ 2006 թվականի սեպտեմբերի 15-ի «ԱրմենՏել» փակ բաժնետիրական ընկերությանը ռադիոհաճախականությունների օգտագործման թույլտվություն տրամադրելու մասին» №202Ա որոշման 2-րդ կետով հաստատված հավելվածը՝ «ԱրմենՏել» փակ բաժնետիրական ընկերության ռադիոհաճախականությունների օգտագործման թույլտվության պայմանները, լրացնել հետևյալ բովանդակությամբ 3.25 կետով.

«3.25 Լիցենզավորված անձին իրավունք է տրվում և պարտավորեցվում է Թույլտվությամբ տրամադրված ռադիոհաճախականությունների տիրույթի օգտագործմամբ, Թույլտվության հավելվածով սահմանված ցուցակում նշված բնակավայրերը, ամրակցված հիմնական հեռախոսային ծառայությունների հետ մեկտեղ ապահովել ամրակցված լայնաշերտ ինտերնետ հասանելիության ծառայությունների մատուցման հնարավորությամբ՝ օգտագործելով անլար տեխնոլոգիա և ամրակցված վերջնակետային սարքավորումներ:

Լիցենզավորված անձի կողմից սույն կետում նշված ամրակցված վերջնակետային սարքավորումները բաժանորդներին տրամադրվում են անվճար՝ բաժանորդների կողմից ամրակցված հիմնական հեռախոսային ծառայությունների հետ մեկտեղ ամրակցված լայնաշերտ ինտերնետ հասանելիության ծառայություններ ստանալու ցանկություն հայտնելու դեպքում»:

2. «ԱրմենՏել» փակ բաժնետիրական ընկերությանը.

1) սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից մեկամսյա ժամկետում Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով ներկայացնել սույն որոշման 1-ին կետի կատարումը մինչև 2016 թվականի սեպտեմբերի 1-ն ապահովող միջոցառումների ծրագիր.

2) սույն կետում նշված միջոցառումների ծրագրի ներկայացումից հետո, կիսամյակային պարբերականությամբ, Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով ներկայացնել կատարված աշխատանքների վերաբերյալ հաշվետվություն:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝

Ռ. ՆԱԶԱՐՅԱՆ

ք. Երևան
19 հունիսի 2015 թ.
ժամը 16 00